ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2025 թվականի N 1407 - Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ ընդունել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) սեփականությունը հանդիսացող՝ 2016 թվականի արտադրության, 37,884,736.0 դրամ սկզբնական և 4,104,179 դրամ հաշվեկշռային արժեքներով TOYOTA LC 200 4.6 GAS (պետհամարանիշ՝ 323 CN 61, նույնացման համար՝ JTMHX05JX04126259) տրանսպորտային միջոցը (այսուհետ՝ տրանսպորտային միջոց 1) ու ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե):

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ կոմիտեին ամրացված 2016 թվականի արտադրության TOYOTA LC 200 (պետհամարանիշ՝ 001CC90, նույնացման համար՝ JTMHX05J804122565) տրանսպորտային միջոցը (այսուհետ՝ տրանսպորտային միջոց 2) հետ վերցնել կոմիտեից և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում՝

1) հիմնադրամի գործադիր ղեկավարի հետ համատեղ ապահովել տրանսպորտային միջոց 1-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված, ինչպես նաև պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով հիմնադրամի միջոցների հաշվին.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել տրանսպորտային միջոց 2-ի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցների հաշվին:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների կատարման նպատակով տրանսպորտային միջոց 1-ը ենթակա է տեղափոխման պետական շարժական գույքի պահառության նպատակով կոմիտեին ամրացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փողոց 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ հիմնադրամի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

02.10.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ